

---

ՐԱՖՖՈՒ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ  
ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

1913 թ. Աննա Բաֆֆին «Պարսկական պատկերներ» ժողովածուում հրապարակեց Բաֆֆու «Ճանապարհորդություն Պարսկաստանի»<sup>1</sup> անավարտ աշխատանքը, իսկ «Նամակ Դավրեժից»<sup>2</sup> հողվածաշարի հրապարակումով ամբողջացվեց գրողի պարսկական նկարագրությունների շարքը: Առաջին աշխատանքի հիմքում ընկած է 1857–1858 թթ. Պարսկաստանում կատարած ուղևորությունների ժամանակ Բաֆֆու գրառած տպավորությունները, գրողի տեսածն ու լսածը: Մինչդեռ «Նամակ Դավրեժից» շարքը գրելիս Բաֆֆին բնակվում էր Թավրիզում, տեղի հայկական դպրոցում հայոց լեզու և պատմություն դասավանդում: «Պարսկաստանն ու պարսկահայերը,– գրել է Ա. Հարությունյանը,– Բաֆֆու աշխատանքներում մեծ տեղ են գրավում, այդ երկրին նա ծանոթ էր մանկական տարիքից»<sup>3</sup>:

Բաֆֆու հարուստ ժառանգությունում սփռված ազգագրական մեծ արժեքներ կայացնող վկայություններն առ այսօր չեն արժանացել ուշադրության: Մինչդեռ դրանց ամբողջացումն ու ընդհանրացումը, գիտական շրջանառության մեջ դնելը թույլ կտար վեր հանել XIX դ. երկրորդ կեսին պարսկահայ իրականության մեջ դեռևս պահպանված ավանդական կենցաղի ու մշակույթի շատ տարրեր: Ելնելով հողվածի ընձեռած սահմանափակ հնարավորությունից՝ կանգ կառնենք միայն Բաֆֆու պարսկական ուղևորությունների շարքում եղած ազգագրական վկայությունների վրա: Դրանցում եղած ազգագրական բազմաբնույթ և բազմաժանր հարուստ նյութերը միայն պարսկահայերին չեն վերաբերում, այլև Պարսկաստանում ապրող մի շարք ժողովուրդների և էթնիկական խմբերի:

Քաջատեղյակ լինելով Պարսկաստանում հայերի խաղացած դերին՝ Բաֆֆին իրավացիորեն նկատում է, որ երկրի ֆինանսական վիճակը պայմանավորված էր հայ մեծահարուստների դիրքով, երկրի դպրոցներում եվրոպական առաջին վարժապետները եղել են հայերը, դիվանագիտական հարաբերություններում՝ թարգմանիչները, թատրոնում՝ բեմական խոսքի վարպետները, ինչպես նաև մամուլի և տպագրության հիմնական ոլորտները գտնվել են հայերի ձեռքում<sup>4</sup>: Չնայած դրան, պարսկահայերը ենթարկվել են կրոնական, ազգային ճնշումների

---

<sup>1</sup> Տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Ճանապարհորդություն Պարսկաստանի.– Երկերի ժողովածու (այսուհետև՝ ԵԺ), հ. 8, Երևան, 1963:

<sup>2</sup> Տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Հողվածներ.– ԵԺ, հ. 9, Երևան, 1964:

<sup>3</sup> Ա. Հ ա ր ո ն ի թ յ ու ն յ ա ն. Բաֆֆին հրապարակախոս և քննադատ.– ԵԺ, հ. 9, էջ 12:

<sup>4</sup> Տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Հողվածներ, էջ 121:

ու հայաձանքների, որոնց մանրամասը նկարագրությունը կատարել է Բաֆֆին:

Պարսկական ուղևորություններում առկա ազգագրական նյութերը նպատակահարմար է ներկայացնել ավանդական ազգագրության մեջ ընդունված չորս հիմնական հիմնախնդիրների կտրվածքով:

Տնտեսական կենցաղ: Այն իր մեջ ներառում է պարսկահայերի հիմնական տնտեսական զբաղմունքները՝ երկրագործություն, անասնապահություն, արհեստներ, առևտուր, օժանդակ տնտեսաձևեր: Հասկանալի է, Բաֆֆին իր առջև նպատակ չի դրել ուսումնասիրել այս բնագավառներն ազգագրական տեսանկյունից, սակայն ուշագրավ տեղեկություններ է թողել պարսկահայերի տնտեսական կենցաղի վերաբերյալ:

Անդրադառնալով Խոյի գավառին՝ Բաֆֆին գրում է, որ ձեռքի տակ եղած տվյալների համաձայն XIX դ. 60-ական թվականներին այնտեղ ապրում էին շուրջ 700 հայ ընտանիք: Նրանց հիմնական զբաղմունքն անասնապահությունն է, տարվա երեք եղանակներին՝ երկրագործությունը, իսկ ձմռանը՝ ջուլհակությունը: Խոյի հայերն առևտրով քիչ են զբաղվում, որը Բաֆֆին բացատրում է հայերի աղքատ լինելով և օտարներից ունեցած վախով. «Եթե իմանան հայը փող ունի, մի գիշեր գլուխը կկտրեն և կկողոպտեն»<sup>5</sup>: Տերը գյուղացուց խլում է բերքի արդյունքը, որի պատճառով նրանք հեռանում են այլ երկրներ, հատկապես Հնդկաստան: Չնայած գյուղացիների թիվը գնալով պակասում է, սակայն հարկերը մնում են նույնը, որի պատճառով գյուղացին ստիպված լքում է գյուղը վերջնականապես<sup>6</sup>:

Իրեն բնորոշ արտահայտչամիջոցներով Բաֆֆին նկարագրել է Խոյի հայ գյուղացիների վարուցանքը, ծփացող ցորենի արտերը, ուր հունձն արվում էր տղամարդկանց կողմից, իսկ խրձերը կապում էին կանայք և աղջիկները: «Ծերունի հնձվորը մի խուրձ բարձրացնելով մոտեցավ ինձ, – գրում է Բաֆֆին, – դրեց իմ առջև ասելով, «քեզ փեշքեշ, աղա»: Դա բերքի առաջին նշանն էր, որ արտի տերը նվիրում էր իր արտի այցելուին:

– «Աստված օրհնե քո հունձքը», – ասացի նրան, տալով որոշ գումար»<sup>7</sup>:

Կապված խրձերը բարձելով սայլի վրա, տեղափոխում են կալերը: Բաֆֆին նկարագրում է կամնասայլի միջոցով կալսման եղանակները պարսկահայերի մեջ<sup>8</sup>: Կամնասայլին լծում էին մեկ զույգ եզ, այն ճռռալով պտտվում էր կալում փոված օրանի վրա, մանրացնելով ամբողջական հասկերը՝ վերածելով հարդի:

<sup>5</sup> Տե՛ս Բաֆֆի. Ընդհանուր պատմություն..., էջ 354:

<sup>6</sup> Տե՛ս Բաֆֆի. Հոդվածներ, էջ 132:

<sup>7</sup> Բաֆֆի. Ընդհանուր պատմություն..., էջ 435: Այս սովորույթը կրել է համահայկական բնույթ և կենսունակ էր մինչև 1950-ական թվականները. ում առջև դնում էին կապած խուրձը, նա պարտավոր էր որոշ գումար հանձնել բերողին: Այն իր մեջ ներառում էր առաջին բերքի, խրձի և, ընդհանրապես, առաջինի գաղափարը:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 396: Հայտնի է, որ հայոց երկրագործական կալսման տեխնիկայի բարձրագույն նվաճումը եղել է կամը, այնուհետև՝ կամնասայլը, վերջինիս ժողովուրդը տվել է ճառճառ կամ ջառջառ անունը, որովհետև աշխատանքի ընթացքում այն անընդհատ ճռռալով ձայներ է հանում (տե՛ս Վ. Բ. դ. յ ա ն. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 406-407):

Խոսելով պարսկահայերի երկրագործությամբ զբաղվելու մասին՝ Րաֆֆին գրել է, որ այդ զբաղմունքը պահպանել է իր նահապետական տեսքը: Արորին տալիս են «ոսկի» անունը. այն հայերի ու արիական ցեղերի մեջ համաստեղությունների կարգն է դասվում: Մշակում են ցորեն, գարի, բամբակ, ծխախոտ, բրինձ, կտավատ, գերչակ և այլն, սակայն առավել տարածված էր գարին ու կորեկը: Վերջինս ցանում են հատկապես այն ժամանակ, երբ մորեխից վտանգ է սպասվում, քանի որ մորեխը կորեկ չի ուտում<sup>9</sup>:

Պարսկահայերի տնտեսական մյուս զբաղմունքն անասնապահությունն էր: Պահում են խոշոր և մանր եղջերավոր անասուններ: Րաֆֆին նկարագրում է անասունների հոտերը դեպի ամառանոցային արոտավայրեր քշելը և կաթի մշակման եղանակները<sup>10</sup>: Անասուններ պահում են այնքան, որ մտով ու կաթնամթերքով բավարարեն ընտանիքի կարիքները: Հովտային շրջաններում ապրող հայերը մեծ քանակությամբ անասուններ չեն կարող պահել, քանի որ քիչ են արոտավայրերի համար նախատեսված անմշակ հողերը: Ոչխարաբուծությունը թույլ է զարգացած, քանի որ անհրաժեշտ է հոտերը սար տանել, մինչդեռ հայ երկրագործը դժվար էր հեռանում իր հիմնական բնակավայրից և զբաղմունքից: Լեռնային ու նախալեռնային գոտիներում ազատ արոտավայրերի առկայությունը նպաստավոր էր մանր եղջերավոր անասնապահությամբ զբաղվելու համար<sup>11</sup>:

Այգեգործությունը Պարսկաստանում գտնվում է իր ծաղկման մեջ. աճեցնում են արևելյան բոլոր ազնիվ պտուղները: Լայն տարածում ունի խաղողի մի շարք տեսակների մշակումը. քիշմիշն օգտագործվում է ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտահանվում է վրոպական և ասիական տարբեր շուկաներ<sup>12</sup>:

Ցածրադիր շրջաններում առավել տարածված է բրնձի ու բամբակի մշակումը, գոյություն ունի աշխատանքի սեռատարիքային բաժանում: Հողը վարում են տղամարդիկ, մնացած աշխատանքները մնում է կանանց վրա: Նրանք ցանում են, քաղհան անում, բերքի հասնելուց հետո հավաքում բամբակի կոզակները և մաքրում: Նոր մեքենաների ներդրումը չնայած արտադրողական է, սակայն բամբակի թելը հաճախակի կտրվում է և թելանյութը կորցնում է իր հատկությունը<sup>13</sup>:

Պարսկահայերի մեջ բավական զարգացած է մեղվապահությունը և բանջարաբոստանային կուլտուրաների մշակումը: Երասխի ցածրադիր վայրերում հնուց ի վեր զարգացած է եղել թթենու մշակումն ու շերամապահությունը: Ստացված մետաքսը խիստ առանձնանում է իր բարձր հատկանիշներով<sup>14</sup>:

Խոսելով արհեստագործության մասին, Րաֆֆին հստակորեն տարանջատում է արհեստների նախնական տիպը՝ տնայնագործությունը, որը բնորոշ էր գյուղական միջավայրին, և բուն արհեստը, որը գոյություն ուներ տարբեր քաղաքներում: Ամեն գյուղ ուներ իր պահանջներին համապատասխան արհեստի որոշ

<sup>9</sup> Տե՛ս Ր ա Ֆ Ֆ ի. Հողվածներ, էջ 134:

<sup>10</sup> Տե՛ս Ր ա Ֆ Ֆ ի. Ճանապարհորդություն... էջ 136:

<sup>11</sup> Տե՛ս Ր ա Ֆ Ֆ ի. Հողվածներ, էջ 135-136:

<sup>12</sup> Տե՛ս Ր ա Ֆ Ֆ ի. Ճանապարհորդություն... էջ 455:

<sup>13</sup> Տե՛ս Ր ա Ֆ Ֆ ի. Հողվածներ, էջ 134:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 144:

տեսակներ: Հյուսնները պատրաստում էին արոտ ու գութան, տնտեսության համար անհրաժեշտ գործիքներ: Դարբնության շնորհիվ ապահովվում էր խոփերի, բահերի, շղթաների, տարբեր տեսակի բրիչների պատրաստումը, առանց որոնց անհնարին կլինեք վարել տնտեսությունը: Գյուղերում զարգացած էր ջրաղաց-պանի արհեստը, սափրիչությունը, երբ սափրիչը շատ դեպքերում բժշկի որոշ պարտականություններ էր կատարում<sup>15</sup>:

Ղարաղաղի (Փայտակարան) հայերի մասին Բաֆֆին գրում է, որ մինչև այժմ նրանք մշակում են երկաթի հարուստ հանքերը, զբաղվում դարբնությամբ: Առավել տարածված է պայտարությունը, որը շատ հայերի գոյության հիմնական միջոցն է: Ներքին շուկայից բացի, պայտերն արտահանվում են տարբեր քաղաքներ<sup>16</sup>:

Ըստ Բաֆֆու հաղորդումների, պարսկահայության մեջ բավական տարածված էր ձիաբանությունը: Չնայած նա չունի ձիաբանների կառուցվածքի վերաբերյալ նկարագրություններ, սակայն մանրամասնորեն անդրադարձել է ձեռք կենցաղում մեծ չափով օգտագործելու հարցերին: Ձեռք հիմնականում ստանում էին կտավատից և գերչակից, որն օգտագործում էին ինչպես սննդում, այնպես էլ լուսավորելու նպատակով<sup>17</sup>: Ձեռք են ստանում նաև կանեփից ու քնջութից. վերջինս իր համով չի զիջում ձիաբայտի ձեռքին: Պարսկահայերը լիովին չեն տիրապետում կանեփի ցողունների մշակման հմտություններին, միայն դրա թելերից պատրաստում են պարաններ և մեծ պարկեր (ջվալներ)<sup>18</sup>: Տարին մի քանի անգամ ձիաբաններն էին գումեշներին, որպեսզի ոչնչացնեին դրանց վրա եղած միջատներին և փափկեցնեին գումեշի կաշին:

Ուշագրավ է բրդի մշակման, տարբեր տեսակի թելեր և գործվածքներ ստանալու ու ներկելու մասին Բաֆֆու հաղորդումները: Բրդի մշակումը հիմնականում եղել է կանանց զբաղմունք և պայմանավորված էր անասնապահությամբ: Բրդի թելերից պատրաստում էին կարպետ, թաղիք, իսկ ավելի նուրբ թելերից՝ վերարկու (արա), վարտիք և այլն: Պարսկահայերի մեջ գորգագործությունը զարգացած չէր: Դա բացատրվում է նրանով, որ հայկական ոչխարների բուրդը չունեք պարսկականի նրբությունը<sup>19</sup>:

Բաֆֆին նկարագրում է նաև բամբակի հումքի մշակումը: Այդ աշխատանքները հիմնականում արվում էին ձմռանը, թոնրի շուրջը, որոնց մասնակցում էր ողջ ընտանիքը: Գոյություն ունեք աշխատանքի սեռատարիքային բաժանում. փոքր երեխաները, մանկահասակ աղջիկները բամբակից հանում էին կորիզը, իսկ հարսները չիրչիր էին քաշում<sup>20</sup>: Տան ծերունին գգում էր մաքրած բամբակը, պատվները թել էին մանում, իսկ երիտասարդները կտավ գործում: Պարսկահայերի արհեստագործության հիմքում հիմնականում ընկած է բամբակի հումքը:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 136:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 144:

<sup>17</sup> Տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Ճանապարհորդություն..., էջ 455:

<sup>18</sup> Տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Հոդվածներ, էջ 134:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 136:

<sup>20</sup> Չիրչիրը ճախարակի մի տեսակ է, որի օգնությամբ բամբակը մաքրում են կորիզներից. տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Ճանապարհորդություն..., էջ 456:

Հյուրընկալվելով Ուրմիայի Նախիջևան-թափա գյուղում՝ հայ ջուլիակի ընտանիքում, Բաֆֆին թողել է ջուլիակության հետևյալ դիպուկ նկարագիրը: Հորի վրա դրված են ջուլիակի կտավագործության համար նախատեսված մեքենաները. ջուլիակը ոտքերը մեկնում է հորի մեջ ու նստում: Մաքոքը սկսում է խաղալ հինաձ թելերի միջից և դուֆայի դաշնակավոր ձայնն անընդհատ խախտում է խրճիթի մելամաղձոտ լռությունը: Ջուլիակի կինը, նստած դագաղների մոտ, շարժում է իր ճախարակը, պտտեցնելով վիլան, փաթաթում թելը: Նա ամուսնու գործընկերն է<sup>21</sup>: Սկեսուրը ևս մոտենում է իր ջահրային, նստում դրա առջև, պտտեցնելով ճախարակը մանում է բամբակի թելեր, կաժ պատրաստում կտավ գործող իր որդու համար<sup>22</sup>: Ըստ Բաֆֆու, այդ արհեստը պահանջում է ֆիզիկական մեծ աշխատանք, սակայն քիչ արդյունավետ է, որի պատճառով կտավագործությունը գտնվում է իր «տղայության մեջ»<sup>23</sup>:

Կտավագործության այս կենդանի նկարագրությունը եզակի վկայություն է գրավոր աղբյուրներում: Այն լիարժեք պատկերացում է տալիս XIX դ. երկրորդ կեսի պարսկահայ գյուղական ընտանիքի զբաղմունքների, ավանդական բարքերի և կենցաղային տարբեր հարցերի վերաբերյալ:

Բաֆֆին մանրամասն անդրադառնում է պարսկահայ քաղաքային բնակչության տեղաբաշխվածությանն ու զբաղմունքներին: Հայերը քաղաքներում մեծ թիվ չեն կազմում, թերևս, բացառություն է Դավրեժ քաղաքը: Հայերը կամ բնակեցված են մահմեդական բնակչության հետ պարիսպների ներսում, կամ քաղաքի առանձին արվարձաններում: Որպես կանոն, հայերին չեն թույլատրում ապրել մահմեդականների հետ, քանի որ կպղծեն նրանց: Հայերի համար էլ հարմար չէ խառը բնակվելը, որովհետև ամեն քայլափոխի նրանց վտանգ է սպասում: Թերևս բացառություն է կազմում Թեհրանը, որտեղ որոշակի հանդուրժողականություն կար քրիստոնյաների նկատմամբ<sup>24</sup>:

Բաֆֆին վկայում է, որ քաղաքներում հայերի հիմնական զբաղմունքը ոսկերչությունն է. հրեաները չեն կարող մրցել հայ արհեստավորների հետ, քանի որ հայերն այս ոլորտում վաղուց շահել են պարսիկների վստահությունը: Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ շահի ոսկերիչները հայեր են, որոնց համար պալատում հատուկ արհեստանոց կա: Այս արհեստը շահի պալատում փոխանցվում է ժառանգաբար<sup>25</sup>:

Քաղաքային միջավայրում ոսկերչությունից հետո երկրորդ արհեստը հյուսնությունն է: Հայ արհեստավորը, յուրացնելով եվրոպական փայտամշակման հմտությունները, լավ տիրապետում է հյուսնությանը՝ բավարարելով պարսիկների քմահաճույքներն ինչպես բնակարանի ներքին կահավորման, այնպես էլ արտաքին ոճի ասպարեզում:

Հայերի կարևոր զբաղմունքներից են դերձակությունը, գինեգործությունը և

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 432:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 233:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 433:

<sup>24</sup> Տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Հողմածներ, էջ 136-137:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 137:

զինագործությունը: Քանի որ մահմեդականությունն արգելում է ոգելից խմիչքների օգտագործումը, գինեգործությունը «մնացել է հայերի սեփականությունը»<sup>26</sup>:

Պարսկաստանում ևս արհեստավորները միավորվում են տարբեր համքարություններում, սակայն հայերը գերադասում են ստեղծել նման միավորումներն իրենց ազգակիցների հետ: Արհեստների մասին խոսելիս, Բաֆֆին բավականին մանրամասն անդրադառնում է առանձին արհեստների հասկապես տեխնիկատեխնոլոգիական, սոցիալական կողմերին, որով հնարավոր է դառնում որոշակի պատկերացում կազմել պարսկահայերի մեջ XIX դ. երկրորդ կեսին պահպանված արհեստագործության վերաբերյալ:

Անդրադառնալով Պարսկաստանի և պարսկահայերի տնտեսական կենցաղին՝ Բաֆֆին ընդգծում է երկրի տնտեսության հետամնաց լինելը, հողի մշակման, անասնապահության վարման ավանդական եղանակներն ու տարագաձևերը, այժի մազից գործած տրեխներ կրելը, կիսազետնափոր բնակարաններում անասունների հետ ապրելը և գալիս այն հետևության, որ եթե Քսենոփոնը նորից անցնելու լիներ Հայաստանի միջով, նորից նկարագրելու լիներ նրանց ընտանեկան կենցաղը, դարձյալ նույնը պիտի գրեր, ինչ-որ տեսել էր քսանչորս ու կես դար առաջ<sup>27</sup>:

Պարսկահայերի տնտեսական կենցաղում առևտրի ունեցած դերի ամբողջական նկարագրությունը Բաֆֆին տվել է «Վաճառականությունը Պարսկաստանում» աշխատանքում<sup>28</sup>: Պատմական լայն զուգահեռներով և իր իսկ կողմից գրառած ազգագրական նյութերի միջոցով նա ընդգծել է Պարսկաստանում հայերի ծավալած առևտրական գործունեությունը՝ մանրամասն կանգ առնելով առևտրական գործարքներին, երկրից արտահանվող ու ներմուծվող ապրանքների տեսականուն: Խոսելով հայերի կողմից Պարսկաստանի տնտեսական, առևտրական կյանքում խաղացած դերի մասին, Բաֆֆին գրել է, որ հայտնի է, թե Շահ-Աբասի օրոք տեղահանված հայերի կողմից Նոր Ջուղայի հիմնումը ինչպիսի տնտեսական, առևտրական, մշակութային զարգացում բերեց Պարսկաստանին: Սակայն վիճակը փոխվեց Շահ-Աբասի մահից հետո, երբ Ջուղայի հայության նկատմամբ կիրառած բռնություններն ու հալածանքները, սովոր ստիպեցին քաղաքի հայերին թողնել վաճառաշահ Ջուղան, հեռանալ Հնդկաստան: Այստեղ ևս հայերը ծավալեցին առևտրական լայն գործունեություն, սակայն անգլիացիների հաստատվելուց հետո, չկարողանալով մրցել նրանց հետ, «հայերը մի փոքր ընկան»: Այլ վախճան ունեցան Ջուղայում մնացած հայ առևտրականները. աղքատացան և կորցրին իրենց նախկին դերը: Միակ բանը, որ նրանք կարողացան պահել՝ «կրոնն էր, լեզուն և ամուր եկեղեցական կապը Ս. Էջմիածնի հետ»<sup>29</sup>:

<sup>26</sup> Ոգելից խմիչքների նկատմամբ կիրառված արգելքը նպաստեց Պարսկաստանում շաքարի և թելի աննախադեպ տարածմանը (տե՛ս նույն տեղում, էջ 136-141):

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 192:

<sup>28</sup> Բ ա ֆ Ֆ ի. Վաճառականությունը Պարսկաստանում, - ԵԺ, հ. 9, էջ 34:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 145:

Ըստ Բաֆֆու, պարսիկ առևտրականները գործում էին հիմնականում ներքին շուկայում, արտաքին շուկա դուրս գալուն խանգարում էր երկու հանգամանք. նախ՝ օտար հողի վրա պարսիկը պիտի շփվեր գյավուրների հետ ու պղծվեր և երկրորդ՝ ստիպված էր ուսել շարիաթով արգելված նրանց ճաշատեսակները: Այս արգելքները խախտեցին տեղի բնիկ հայերը՝ եվրոպական ապրանքներ բերելով Պարսկաստան, իսկ պարսկական ապրանքները արտահանելով Եվրոպա: Հայերի օրինակը վարակիչ եղավ նաև Եվրոպայի առևտրականների համար<sup>30</sup>: Թավրիզի հայ վաճառականությունը չէր կարող մրցել եվրոպական առևտրական տարբեր ընկերությունները ներկայացնող առևտրականների հետ, ուստի ստիպված էր դաշտը զիջել նրանց:

Պարսկաստանում երկաթուղիներ չկան, ապրանքների ներմուծումն ու արտահանումը արվում է ձիերի, ջորիների, ավանակների, ուղտերի քարավաններով, որոնք կազմվում են առանձին մարդկանց կամ ընկերությունների կողմից: Վաճառականների ապրանքը պահվում է քարվանսարաններում. բոլոր հարցերում, թալանից բացի, քարավանի գլխավորը պատասխանատու էր ապրանքի համար: Թավրիզում առևտուրն արվում էր միջնորդների, իսկ դրամական հաշվարկները՝ սարաֆների կողմից<sup>31</sup>:

Եվրոպական ապրանքներն արագ տարածում էին գտնում Պարսկաստանում՝ դուրս մղելով տեղականը: Թերևս բացառություն են կազմում պարսկական գորգերը, որոնք աչքի են ընկնում իրենց շքեղությամբ: Միակ երկիրը, որը Պարսկաստանում չունի առևտրական տուն, Ռուսաստանն է, որի ապրանքները չեն կարող մրցել եվրոպական էժան ու որակով ապրանքների հետ<sup>32</sup>:

Անդրադառնալով Պարսկաստան ներմուծվող ապրանքների տեսականուն՝ Բաֆֆին գրել է, որ Եվրոպայից ներմուծվում էր մահուդ, չիթ, ճենապակե ամաններ, զենք, մետաքսե, բրդե գործվածքներ, ինքնաեռներ, կենցաղային տարբեր առարկաներ: Առևտրականները քաջատեղյակ էին բնակչության մեջ մեծ պահանջարկ ունեցող ապրանքներին և ժողովրդի ճաշակին: Բաֆֆին կանգ է առնում նաև Պարսկաստանից արտահանվող ապրանքների տեսականուն. աբրշում (մետաքս), բամբակ, բուրդ, խոշոր եղջերավոր անասունների կաշիներ, զանազան գազանների մորթիներ, տարբեր տեսակի մրգեր, շալեր, գորգեր, հինա և այլ ապրանքներ<sup>33</sup>: Ուշագրավ է Բաշկալեում կազմակերպված տոնավաճառների, ապրանքավաճառության վերաբերյալ Բաֆֆու գրառումները: Այստեղ առևտուրը հիմնականում կենտրոնացված էր հայերի և հրեաների ձեռքում:

Բաֆֆին իրավացիորեն նկատում է, որ առևտրի զարգացման համար Պարսկաստանում գոյություն ունեն մի շարք խանգարող հանգամանքներ, որոնցից ամենից կարևորը ճանապարհների անապահովությունն է: Շատ հաճախ քրիս-

<sup>30</sup> Նույն տեղում:

<sup>31</sup> Նրանց կարելի է համարել փոքր բանկիրներ, որոնք վաճառականներից ընդունում են գումարներ և անհրաժեշտության դեպքում հայտնի տոկոսներով փող տրամադրում: Առևտրականների միջև ծագած վեճերը լուծվում են տարբեր կարգի դատարանների միջոցով (տե՛ս նույն տեղում, էջ 147):

<sup>32</sup> Նույն տեղում:

<sup>33</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 148-150:

տոնյան իր ապրանքների հետ զրկվում է կյանքից: Քարավան կտրելը դարձել է առանձին ավագակախմբերի հիմնական զբաղմունքը: Նա հանդիպում է հայերից կազմված մի մեծ քարավանի, որը մեկնում էր Ս. Նախավկայի վանքն ուխտագնացության: Սակայն քարավանը կողոպտված էր, իսկ գեղեցիկ աղջիկները գերի էին տարված: Բաֆֆին որոշում է միանալ քարավանի բեկորներին՝ մարդկանց ցույց տալով բժշկական օգնություն: Նրա այն հարցին, թե 10–15 մարդուց կազմված ավագակախումբն ինչպես կարող էր այդ մեծ քարավանը թալանել, հոգևորականը պատասխանում է՝ դու չգիտես, որ երկու գայլը մի ամբողջ ոչխարի հոտ են ցրում: Այդ ավագակախմբերի համար ոչ մի արգելք չկար, նրանց հովանավորում են խանի մարդիկ: Երբ թալանում են և սպանում մի հայ վաճառականի, նրա ձին հայտնվում է խանի ախոռում<sup>34</sup>:

Խոսելով Պարսկաստանում եղած բազմաթիվ հարկերի ու տուրքերի մասին, որոնք խանգարում էին առևտրի ծավալմանը, Բաֆֆին հիշատակում է սիլանջի տուրքը, որը գանձվում էր սահմանի մոտ միայն քրիստոնյաներից, երբ նրանք հայրենիք էին վերադառնում օտար երկրներից. «Դա նրանց չոր ու ցամաք մարմնի մաքսն էր», որից մահմեդականներն ազատված էին<sup>35</sup>:

Պարսկաստանում, երբ ապրանքը մի գավառից տարվում էր ուրիշ գավառ, մաքս են գանձում: Ամեն քաղաք ուներ իր մաքսատունը, երբ ապրանքը մի ձեռքից անցնում է մյուսը, անպայման մաքս էր վճարվում: Այստեղից էլ չափ ու կշռի բազմազան միավորները տարբեր գյուղերում և քաղաքներում: Այս մասին Բաֆֆին գրել է. «... զանազան ծանրությամբ քար ու կշիռ, զանազան երկարությամբ գազ ու արշին, և զանազան մեծությամբ քոռ ու սոմար»<sup>36</sup>: XIX դ. երկրորդ կեսին նախկինում գոյություն ունեցած այս չափ ու կշռի միավորները Պարսկաստանում մնացել էին անփոփոխ:

Նյութական մշակույթ: Բաֆֆու ճամփորդական նոթերում թեպետ պարսկահայերի նյութական մշակույթի վերաբերյալ վկայությունները շատ չեն, դրանք առավել ամբողջական են նրա գեղարվեստական երկերում, բայց, այնուամենայնիվ, արժանի են ուշադրության: Ներքին ու արտաքին թույլ կապերի, ապրանքադրամական հարաբերությունների ոչ բավարար գարգացած լինելու պատճառով, Պարսկաստանում ավանդական ուտեստը հիմնականում խարսխվում էր գյուղատնտեսական զբաղմունքների վրա: Պարսկահայերի առօրյա, տոնածիսական ուտեստի հիմքը կազմում էր մսեղեն, կաթնեղեն և բուսական հումքից պատրաստվող կերակրատեսակները, որոնք ընդհանրական են եղել հայոց ավանդական խոհանոցի համար: Սակայն Պարսկաստանում էթնիկակրոնական ճնշումների ու հալածանքների մթնոլորտում ազգային ուտեստը ևս ենթարկվում էր որոշակի սահմանափակումների: Պիղծ էր համարվում այն ամենը, ինչն արտադրվում էր քրիստոնյայի ձեռքով: Առանձին դեպքերում պարսկահայերի համար այս արգելքը չարիքի փոքրագույնն էր, հակառակ դեպքում նրանցից կխլեին ամեն ինչ: Հայտնի է, որ բնակավայրերի մոտ գտնվող գորքը բաժանում

<sup>34</sup> Տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Ճանապարհորդություն..., էջ 318–321:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 312:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 357–358:



էին տների վրա, բայց հայի հացը պիղծ էր համարվում, ուստի հայերից գանձում էին սննդի արժեքը<sup>37</sup>:

Փողոցում, հասարակական վայրերում հայերը զրկված են «ամեն մի թաց բանի» ձեռք տալու իրավունքից, ինչ վաճառում է մահմեդականը: Երբ Բաֆֆու սպասավոր Մեսրոպն անզգուշորեն մատով դիպչում է ոչխարի մսին, մսավաճառը կարծում է, որ նա պղծեց միսը, ուստի պետք է գնի ամբողջ ոչխարը: Միայն կրկնակի ավել վճարելով է սպասավորն ազատվում<sup>38</sup>:

Անդրադառնալով պարսկահայերի ավանդական տարագին, Բաֆֆին գրել է, որ տարագի հիմքում ընկած է բրդի, բամբակի, բոժոժի, վուշի ու կանեփի հումքից ստացված թելերով գործած կտորեղենը: Կտավագործության զարգացումը նպաստեց ներկարարության տարածմանը: Տնայնագործական եղանակներով ստացված ու ներկված կտորեղենը ներքին շուկայում օգտագործվելուց բացի, արտահանվում էին արտաքին շուկա, հատկապես Թիֆլիս<sup>39</sup>:

Հայերը հագնում են դաբա տարագը, որը գույնով ու ձևվածքով առանձնանում է պարսկականից, որպեսզի մահմեդականները ճանաչեն և խուսափեն նրանցից: Պարսկահայը պարտավոր էր խստորեն պահպանել տարագի վրա սահմանված արգելքները: Հասարակական վայրերում չդիպչեր մահմեդականին, որպեսզի չպղծեր նրան: Երբ հայերից մեկը խախտելով արգելքը, հագնում է մահմեդականի տարագ, նրան հանդիպող մահմեդականը բարևում է, սակայն իմանալով իրողությունը, խստորեն ծեծում է հային: Մահմեդականներն իրար դիմում են «խաղաղություն լինի քեզ» բառերով, որոնք երբեք չեն ասում այլադավաններն<sup>40</sup>:

Տարբերակվելու համար հայ տղամարդիկ պարտավոր էին իրենց գազաթը միշտ սափրած պահել: Պարսկաստանում հայերը չեն կարող դեղին, կարմիր, կանաչ, վառ գույներով հողաթափեր կրել կամ մորուքները հինայով ներկել, քանի որ դրանք մահմեդականների մենաշնորհն են<sup>41</sup>:

Բաֆֆին ունի ուշագրավ ակնարկ պարսկահայերի աղջկական տարագի վերաբերյալ: Աղջիկները ման են գալիս բաց դեմքով, առանց քողի, մինչև անգամ կարող են խոսել օտար տղամարդկանց հետ: Դա աղջկական հասակի ազատությունն է, որն ավարտվում է նշանվելուց հետո: Գյուղական օրիորդի գլխին փոքր արախչի կար՝ զարդարված ուլունքներով և արծաթե դահեկաններով, ականջներին՝ օղեր, իսկ պարանոցին՝ օղամանյակ: «Ես շատ զարմացա, որ օրիորդի քթից նույնպես օղակ էր ամրացված, ո՞ր ժամանակներից է հայերի մեջ մնացել այդ վայրենի սովորույթը», – գրում է Բաֆֆին<sup>42</sup>:

Պարսկաստանում քրիստոնյաների վիճակն առավել ծանր էր հատկապես մահմեդականների որոշ տոնակատարությունների օրերին: Մի անմեղ ծիծաղը,

<sup>37</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 352-354:

<sup>38</sup> Տեղի քահանայի կարծիքով, դա Սուրբ Աստվածածնի պատիժն էր, քանի որ Մեսրոպը խախտել էր ընդունված կարգը և միս գնել Մեծ պատի արգելքի շրջանում (տե՛ս նույն տեղում, էջ 381):

<sup>39</sup> Բաֆֆին, Հոդվածներ, էջ 134:

<sup>40</sup> Տե՛ս Բաֆֆին, Ճանապարհորդություն..., էջ 355:

<sup>41</sup> Տե՛ս Բաֆֆին, Հոդվածներ, էջ 134:

<sup>42</sup> Տե՛ս Բաֆֆին, Ճանապարհորդություն..., էջ 393:

արհամարհանքը դեպի արարողությունը կարող էր նրանց համար մահվան պատճառ դառնալ: Ուստի, հայերն ու հրեաներն այդ օրերին հազվադեպ են տանից դուրս գալիս<sup>43</sup>: Բաֆֆու բնորոշմամբ, Պարսկաստանում ազգային ինքնությունը պահպանվում է միայն ավանդություններով և ժողովրդական ծեսերով:

Նա տվել է նաև պարսկական տարազի հակիրճ բնութագրությունը. պարսիկի տարազը մեծ մասամբ բաղկացած է մետաքսե բարակ թելերից գործած կտորից, չիթն ու բրդեղեն գործվածքները պատկանում են ստորին խավերին: Պարսկուհին դրսում կրում է չադրա, սակայն այլ է նրա տարազն ու զարդերը հարեմի պատերի ներսում<sup>44</sup>:

Վերոհիշյալ շարադրանքից ակնհայտ է, որ XIX դ. երկրորդ կեսերին Պարսկաստանում ինչպես ուտեստի, այնպես էլ տարազի վրա խստորեն պահպանվում էր որոշակի արգելք, որը տարբեր ժողովուրդների և էթնիկական խմբերի մեկուսացման պատճառ էր: Հայտնի է, որ ազգագրության մեջ նյութական մշակույթի այնպիսի տարրեր, ինչպիսիք տարազն ու ուտեստն են, հանդես են գալիս երկակի ֆունկցիայով՝ միավորող և տարանջատող: Պարսկաստանի մռայլ իրականության մեջ, հասկանալի է, որ տարազի և ուտեստի միավորիչ ֆունկցիան պետք է մղվեր հետին պլան ու տիրապետեր տարանջատիչ ֆունկցիան:

Հասարակական-ընտանեկան կենցաղ: Բաֆֆին որոշ տեղեկություններ է հաղորդում նաև պարսկահայերի հասարակական և հատկապես ընտանեկան կենցաղի մասին:

Հայկական գյուղերը՝ արքունական, թե կալվածատիրական, ունեն մի տանուտեր, որին ընտրում են գյուղացիները: Տանուտերն ունենում էր օգնական, որին զզիր անուն են տալիս: Նա գյուղի «սատանան» է, ամեն ինչ կտեսնի ու կհայտնի տանուտերին: Տանուտերն է սահմանում հարկերը, հավաքում տուրքերը: Նա միաժամանակ գյուղի հաշտարար դատավորն է. գյուղերը դատարան չունեն, վճիռը կայացվում է հրապարակում կամ փողոցում<sup>45</sup>:

«Քսան-երեսուն տարի առաջ, - նշում է Բաֆֆին, - գյուղերում կային մեյիքներ, որոնց տոհմերը մի քանի հարյուր տարվա պատմություն ունեին: Մեյիքներն իշխում էին մեկ կամ մի քանի գյուղերի վրա, ունեին անսահմանափակ իշխանություն: Պարսից շահը նրանց ֆարման էր տալիս, պետությունից ռոճիկ էին ստանում: Մակայն շուտով մեյիքների իրավունքները խլվեցին, իսկ հայերի արտագաղթը վերջնականապես զրկեց նրանց նախնիներն ունեցած իշխանությունից: Առավել նշանակալից էին Ղարադաղի մեյիքները»<sup>46</sup>:

Հյուրընկալվելով Սալմաստ գավառի Փայաջուկ հայկական գյուղում՝ որն ուներ 120 տուն, Բաֆֆին թողել է ընտանեկան բարքերի ուշագրավ նկարագրություն: Հայերը ապաստան են տրամադրում նաև օտար մարդկանց՝ իրենց գրաստներին: Իրեն է մոտենում տան հարսը՝ պղնձե ամանում լցված ջրով, ցանկանալով լվանալ հյուրի ոտքերը: Չնայած Բաֆֆին սկզբում ընդդիմանում է,

<sup>43</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 476-781:

<sup>44</sup> Տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Հողվածներ, էջ 143:

<sup>45</sup> Տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Ճանապարհորդություն..., էջ 141-142:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 142:

սակայն լսելով, որ մերժումը վիրավորական կլինի ընտանիքի համար, համաձայնվում է: «Այդ նահապետական սովորությունը, – գրում է Բաֆֆին, – զմայլեցրեց ինձ»<sup>47</sup>:

Հետաքրքիր է պարսկահայ ընտանիքում անդամների առանձին ճաշելու վերաբերյալ Բաֆֆու հաղորդումները: Երբ ներս են մտնում տանտիրոջ երկու զավակները, կանգնում հյուրի առջև, Բաֆֆին նրանց հրավիրում է սեղան նստել, սակայն հայրը կտրականապես մերժում է, ասելով. «Նրանք դեռևս երկար պետք է սպասավորեն»: Նրանք համարձակություն չունեն նստել իրենց ծնողի մոտ, որին նայում են որպես «գերդաստանի պատրիարքի», որի հեղինակությունը հասնում է անսխալականության<sup>48</sup>:

Պարսկահայերի ներընտանեկան հարաբերությունների ամբողջական պատկերը Բաֆֆին տվել է Ուրմիայի Նախիջևան-թափա հայկական գյուղում հյուրընկալվելիս: Երբ երեք անգամ հագի նշանով արթնանում է սկեսրայրը, հարսը մոտենում է նրա անկողնուն, հագցնում շորերը, շտկում հողաթափերը, ջուր լցնում ձեռքերին, և ծերունին սկսում է աղոթքը: Չնայած իր տարիքին՝ սկեսրայրը անգործ չի մնում, մտնում է գուր՝ անասուններին խնամելու: Պատավր թոնրի մեջ աթար է գցում, վառում այն, իսկ փոքր աղջիկները գնում են ջուր բերելու<sup>49</sup>: Նկարագրելով հյուրընկալ ընտանիքի նիստուկացը, Բաֆֆին գրում է. «Ես գտնվում էի... նահապետական սրբարանի մեջ»<sup>50</sup>:

Հայկական հյուրընկալությանը զուգահեռ՝ Բաֆֆին անդրադարձել է նաև պարսիկների ճաշկերույթներին ու հյուրասիրությանը: Հյուրընկալվելով պարսից պաշտոնյայի ընտանիքում, Բաֆֆին գրում է, որ նրա հետ միննույն ավսեհից օգտվում էին մահմեդական հյուրերը, բայց նրանցից ոչ մեկը ձեռք չէր մեկնում իր բաժնին: Սեղանի վրա չերևացին ոչ դանակ, ոչ պատառաքաղ, դրանց փոխարեն օգտագործում էին մատները: Ոգելից ըմպելիքների փոխարեն խմում էին շաքարից պատրաստած օշարակ: «Ես բոլորովին առանձնացած էի սեղանից, իմացա, որ ինձանից ավելացածը, նրանք շների առջև են գցել, իսկ ավսեհները կտորել»<sup>51</sup>: Բաֆֆու այն հարցին, թե տանտերը ինչու չի ճաշում իր ընտանիքի անդամների հետ, տրվում է հետևյալ պատասխանը. «Ինչպես կարելի է... կանանց հետ սեղան նստել, իմ որդին անգամ, որ ամուսնացած տղամարդ է, իրավունք չունի ինձ հետ ուտելու»: Տան տղամարդը նայում է ընտանիքի անդամների վրա, ինչպես հողագործն է նայում իր հողի և ստացված բերքի վրա, որը կարող է վաճառել կամ ցանկացած նպատակով օգտագործել»<sup>52</sup>:

Ակնհայտ է, թե՛ հայկական և թե՛ պարսկական ընտանիքներում առանձին

<sup>47</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 370-371: Հյուրերի ոտքերը լվանալու կարգը չնայած Բաֆֆուն անձանոթ է եղել, սակայն գրավոր ու դաշտային նյութերի վկայությամբ, նույնիսկ հայկական գերդաստանների մնացուկների պայմաններում, այն բավական կենսունակ էր, հարատևել էր գյուղական վայրերում մինչև XIX դ. վերջերը և XX դ. առաջին կեսը:

<sup>48</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 371:

<sup>49</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 233, 433:

<sup>50</sup> Նույն տեղում, էջ 471:

<sup>51</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 341:

<sup>52</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 342-343:

ճաշելու սովորույթը, որպես գերդաստանային վերապրուկ, իստորեն կիրառվում էր: Մինչև XX դ. կեսերն նկատելի էր հատկապես գյուղական շրջաններում:

Բաֆֆին առավել հանգամանորեն կանգ է առել պարսկահայերի հարսանյաց արարողակարգի վրա: Հարսի ընտրությունը մեծ մասամբ կատարվում էր երկու կողմի ծնողների կողմից: Հաճախ աղջկան նշանում են, բայց նա չի տեսել իր փեսացուին, նրան ընտրել են ծնողները<sup>53</sup>: Հարսանիքից մի քանի օր առաջ, փեսայի հայրը բարեկամների հետ գնում է հարսի հոր տուն խոսք առնելու, ինչպես նաև հարսանիքի հետ կապված որոշ հարցերի շուրջ համաձայնության գալու: Բացի հարսի համար վճարվող գլխագնից, տղայի կողմը պարտավոր էր որոշ քանակությամբ միս, յուղ, բրինձ և այլ մթերքներ տրամադրել հարսի ընտանիքին<sup>54</sup>:

Հայոց հարսանիքներին գլխագին վերագրելը բնորոշ է եղել XIX դ. երկրորդ կեսի համար: Ըստ Բաֆֆու, չնայած աղջկա ծնունդը ծնողներին դժգոհություն չէր պատճառում, բայց հայերն աղջկա վրա ավելորդ ծախսեր չէին անում, ընդհակառակը, փեսայից փող էին ստանում<sup>55</sup>:

Գրավոր ու դաշտային նյութերը, սակայն, չեն հաստատում գլխագնի առկայությունը հայկական հարսանիքներում: Միայն այն հանգամանքը, որ աղջկա ծնունդը հայ ընտանիքում այնպիսի ոգևորությամբ չի ընդունվել և ընդունվում, ինչպես տղայինը, ինքնին ժխտում է գլխագնի գոյությունը մեզանում: Փեսայի ծնողների կողմից հարսի ընտանիքին դրամական որոշ միջոցներ հատկացնելը պայմանավորված էր ինչպես հարսանիքի ծախսերի, այնպես էլ ինչ-որ չափով օժիտը փոխհատուցելու անհրաժեշտությամբ:

Որպես կանոն, հարսանիքները տեղի էին ունենում աշնանային աշխատանքների վերջանալուց հետո՝ մինչև Մեծ պասի սկզբները, երբ ավարտվում են գյուղատնտեսական աշխատանքները: Հարսանյաց ծիսակարգը, ինչպես հայերի, այնպես էլ պարսկահայերի մեջ, տևում էր յոթ օր ու գիշեր: Դա պատահական չէր, քանի որ հայերի մեջ յոթ թիվը համարվում է երջանիկ և հաջողություն բերող, երբ յուրաքանչյուր օր արվում էր հարսանիքը նախապատրաստելու որոշ աշխատանք: Այսպես, հարսանիքի նախորդ երեկոյան դիոլ գուռնայի հնչյունների տակ մորթում էին մսացուն: Երիտասարդները պարում էին, իսկ տարեցները խմում մի բաժակ գինի՝ բարեմաղթություններ ասում գույզի հասցեին: Միսը եփում էին գիշերով, իսկ չամուսնացած տղաները մաղում էին հարսանիքի հացի այլուրը<sup>56</sup>:

Մսացուն մորթելու գիշերը մի խումբ չամուսնացած աղջիկներ, նվագով ու պարով, սկուտեղի մեջ դրած հինան տանում էին հարսի տուն: Այդ գիշեր հարս-

<sup>53</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 400:

<sup>54</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 451:

<sup>55</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 372:

<sup>56</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 451: Պարսկահայերի մեջ այլուր մաղելու այս կարգը չի հանդիպում հայոց ավանդական հարսանյաց ծեսերում: Որպես կանոն այլուրը մաղում էին կանայք ու աղջիկները լռելյայն, որպեսզի հարսը լուռումունջ լիներ, խմորի տաշտի շուրջը մոմեր էին դնում, որ հարսի ճանապարհը լուսավոր լիներ և այլն: Այս բնույթի արարողությունները սերտորեն աղերսվում են նմանողական հնայական ծեսերի հետ, որոնց մեջ առկա է նմանը նմանով մակաբերելու գաղափարը:

նացուի հոր տանը տեղի է ունենում պարահանդես, իսկ վերջում պարում է հարսը, որի գլխին խաչաձև երկու լավաշ են գցում: Պարից հետո չամուսնացած աղջիկները լավաշները բաժանում են իրար մեջ, որպեսզի «... նրանց բախտն էլ բաց անի»: Այդ գիշեր աղջիկներն անցկացնում են հարսի հետ, վերջինիս և իրենց մատները հինա դնում, որպեսզի իրենք էլ արժանանան նման բախտի<sup>57</sup>:

Մյուս օրն առավոտյան, փեսայի ազգականներից որևէ տարեց կին, ձեռքին մի փունջ ծաղիկ, տղամարդու հետ, որն ուներ գինով լցված դմասսրվակ, դիոլ-գունայով պտտվում են տնիցտուն: Ներս մտնելով՝ գերդաստանի տարեցին մի ծաղիկ և մի բաժակ գինի են տալիս, մաղթում երջանկություն նրա զավակներին ու հրավիրում հարսանիքի<sup>58</sup>:

Հարսանքատանը, բարձր ու երևացող տեղում նստում է թագավորը՝ փեսան, քավորի ձեռքը բռնած և իր ազգայներով շրջապատված: Նրա կրծքի վրա փաթաթված է կանաչ-կարմիր կոզբանդը, իսկ աջ ձեռքում թուրն է բռնել: Երաժիշտները նվագում են տարբեր եղանակներ և հրավիրվածները սկսում են պարել՝ աղջիկները բաց երեսներով, կանայք ու հարսները՝ ծածկված: Ոչ մի կին ու աղջիկ չի բռնում ոչ ազգակից տղամարդու ձեռքը: Հարսանիքներում շատ են նաև կատակերգական պարերը<sup>59</sup>:

Փեսայի տանից հարսի տուն են ուղարկում հաց, միս, յուղ, բրինձ, գինի և այլ սննդամթերքներ: Քահանան օրհնում է փեսայի զգեստները, հագցնում նրան, և հարսանյաց թափորն առանց փեսայի ուղևորվում է հարսի տուն: Այնտեղ փոքր կերուխումից հետո, բերում են հարսի զգեստները՝ սկուտեղի վրա դրված, որի մեջ լցված են մրգեր ու քաղցրավենիք: Քահանան օրհնում է հարսի զգեստները, իսկ մրգեղենը բաժանում են մասնակիցներին: Ոմանք դրանք տուն են տանում, տալիս հասուն աղջիկներին ու տղաներին, որ նրանք ևս արժանանան հարսանիքի<sup>60</sup>:

Ուշագրավ է հարսին հագցնելու արարողակարգը, որն անում էր վարժուհին: Ըաֆֆին այդ գործողությունը բնորոշում է որպես «աղջկա ձեռնադրությունը կնարմատ լինելու»: Վարժուհին ցանկանում է, որ հարսը խոնարհ ու լուռ լինի, նրա վրա զցելով ամոթխածության քողը, ասում է. «Քո դեմքը թող չտեսնեն չար աչքեր», որից հետո նրա երեսը մինչև մահ մնում է ծածկված: Հարսին զգեստավորելն իր մեջ պարունակում է որոշակի խորհուրդ: Հարսի «մեջքը պնդում են փեսայի հոր՝ ... որպես նրա հանգուցյալ գերդաստանի նահապետի գոտիով»<sup>61</sup>:

<sup>57</sup> Նույն տեղում, էջ 451: Նորապսակների ուսերին լավաշ զցելն այսօր ևս արվում է մեր հարսանյաց ծիսակարգում, որը խորհրդանշում է պտղաբերության, սերնդաճի, առատության գաղափարը: Այն ունի համահայկական ճանաչում:

<sup>58</sup> Տե՛ս նույն տեղում: Պարսկահայերի մեջ հարսանիքի հրավիրման այս կարգը գրավոր ու դաշտային ազգագրական նյութերում չի հանդիպում:

<sup>59</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 452:

<sup>60</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 453:

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 453: Հարսանյաց ավանդական ծեսերում, որպես կանոն, հարսի շորերը հագցրել է քավորիկինը, իսկ գոտին կապել քավորը: Քանի որ գոտին համարվել է հարսի սեռական սիմվոլը, քավորի կողմից գոտի կապելը խորհրդանշում է այն հեռավոր ժամանակաշրջանը, երբ հարսին տիրելու առաջին գիշերվա իրավունքը պատկանում էր քավորին: Սակայն հարսի մեջքը փեսայի հոր գոտիով կապելը չի հանդիպում հայոց հարսանյաց արարողություններում:

Այնուհետև, հարսն ստանալով ծնողների օրհնությունը, երեք անգամ պտտվում է թոնրի և նահապետական օջախի շուրջը, արտասուքն աչքերին բաժանվում ծնողներից: Երաժիշտները նվագում են տխուր եղանակ, որն ավելի շուտ հիշեցնում է թաղման երաժշտություն<sup>62</sup>:

Հայրական տանից հարսին հանելիս, նրա գլխին տանիքից շաղ են տալիս ծաղիկներ, քաղցրավենիք, արծաթե փողեր, որը խորհրդանշում է պտղաբերության գաղափարը: Ճանապարհին հարսանիքի թափորին ընդառաջ էր գալիս փեսայի կողմից որևէ կին՝ գլխին դրած ծխացող խնկաման, որը փեսայի սիրո անուշահոտության արտահայտությունն էր<sup>63</sup>:

Շուտով երևում է զարդարված փեսան, որի ձախ կողմից քայլում է խաչեղբայրը՝ ուրցը բռնած: Դա թագավորի խաչաձև դրոշակն է, զարդարված խնձորներով ու չամիչով: Ամեն քայլափոխին փեսային մատուցում են մի բաժակ գինի: Թափորը, հասնելով հարսանքատան դռան մոտ, կանգ է առնում, նվագը դադարեցվում է, սկսվում է փեսային դրամ ընծայելու արարողությունը: Որևէ մեկը բարձրաձայնում է, թե ով ինչքան դրամ ընծայեց<sup>64</sup>: Այնուհետև փեսան ներս էր մտնում՝ կոտրելով շեմի վրա դրված մի քանի ափսեներ, որով նա կոտրում էր իր «կենակցի կամակորությունը», որից հետո կինը դառնում էր նրա հպատակն ու ստրուկը<sup>65</sup>:

Նույն գիշեր, համարյա գաղտնի, կատարվում էր պսակը, որ չար ուժերը նորապսակներին կապումներ չանեն: Այդ նպատակով պսակի ժամանակ արձակում են հարսի ու փեսայի զգեստների կոճակները, նրանց գրպաններում դնում մեկական կողպած կողպեք<sup>66</sup>: Նույն գիշեր գույզը մտնում է առազաստ. հարսի ողջախոհության նշանը ցույց է տրվում ազգականներին:

Նկարագրելով հարսանիքի առանձին փուլերի մանրամասները, Բաֆֆին գրում է, որ Ատրպատականի հայկական գյուղերում պահպանվում են մեր նախնյաց սովորություններն ու ավանդույթները: Ինչպես երևում է վերոհիշյալ շարադրանքից, պարսկահայերի հարսանիքը, համահայկական հիմք ունենալով հանդերձ, առանձին փուլերում հանդես է գալիս նկատելի շեղումներով ու ինք-

<sup>62</sup> Նույն տեղում: Այսօր էլ մեր գյուղական հարսանիքներում հարսին տանից հանելիս հնչեցնում են տխուր երաժշտություն. դա հարսի կողմից հայրական օջախը թողնելու, հարազատներից բաժանվելու, այլ ընտանիք մտնելու խորհուրդն ունի:

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 454: Այս մասին գրավոր ու դաշտային ազգագրական նյութերը որևէ տեղեկություն չեն հաղորդում:

<sup>64</sup> Տե՛ս նույն տեղում: Մեր օրերում այս կարգը չնայած հիմնականում տեղի է տվել, սակայն դեռևս կարելի է հանդիպել առանձին վայրերում: Այն առավել ընդգծվում է քրդերի ու եզդիների հարսանիքներում:

<sup>65</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 454: Հայոց ավանդական և ժամանակակից հարսանիքներում ափսեներ կոտրում են հարսն ու փեսան, որի մասին կան տարբեր կարծիքներ: Դրանով զույգն իր հնագանդությունն էր հայտնում օջախին կամ հարսն իր կուսությունն էր գոհաբերում զերդաստանին: Ակնհայտ է պարսկահայերի հարսանյաց ծեսերում այս արարողակարգի ինքնատիպությունն ու առանձնահատկությունը:

<sup>66</sup> Տե՛ս նույն տեղում: Հայոց ավանդական հարսանիքներում այս կարգի 88888պահպանիչ» քայլի էին դիմում հարսանիքի մատուցող մորթելու արարողության ժամանակ: Փեսայի մակարները հետևում էին, որ հանկարծ որևէ մեկը փեսային 88888կապ չզցի» (այսինքն՝ մատուցի արյան մեջ թաթախած ու փակված կողպեքը գաղտնի չզցի փեսայի գրպանը):

նատիպությամբ:

Պարսկահայերին նվիրված նկարագրություններում Բաֆֆին անդրադարձել է պանդխտության մեկնելու ցավոտ խնդրին՝ դրա մեջ տեսնելով պարսկահայության փոշիացման հիմնական պատճառներից մեկը: «Կարծես, – գրում է Բաֆֆին, – նրա բնիկ երկրի հորիզոնը իր համար թունավորված լինի»<sup>67</sup>: Ըստ Բաֆֆու, պանդխտությունը շատ մեծ չափերի է հասել: Մեկնելով օտար երկրներ, նրանք հույս են փայփայում, որ կբարելավեն ընտանիքի վիճակը, սակայն նրանց դրությունը «սարբերություն չունի բեռնակիր անասունի վիճակից»: Պանդուխտը համետը (փալան) մեջքին կրում է բեռներ կամ ողորմություն խնդրում Եվրոպայի ամեն մի անկյունում, հատկապես Ռուսաստանում: Հաճախ հաջողություն չունենալով, մահանում է օտարության մեջ: «Պարսկաստանում տեսել եմ ամբողջ գերեզմաններ, – գրում է Բաֆֆին, – երբ հարազատները նստած գերեզմանի մոտ սգում են իրենց պանդուխտի կորուստը»: Հաճախ գերեզմանաքարի տակ դրված է լինում պանդխտության մեկնածի «... գրակը, նրա ձեռքի գավազանը... հողաթափերը», որոնք հանգուցյալի ընկերները բերել են հեռավոր երկրներից<sup>68</sup>:

Տնտեսական ծանր դրության պատճառով տղամարդիկ «չեն կարողանում ամուսնանալ», նրանք օտարության մեջ են անցկացնում իրենց կյանքը: Եթե ամուսնացել է, ստիպված է լինում իր սիրելի «հարսանյաց քողը երեսին ձգել»՝ հեռանալով պանդխտության: Խղճալի հարսը տասնյակ տարիներ սպասում է իր ամուսնու վերադարձին. միակ երեխան մեծանալով գնում է հորը որոնելու, նրան գտնում է մեռած կամ նստած որևէ եկեղեցու պատի տակ՝ ողորմություն խնդրելիս: Կինը չի կարող կրկին ամուսնանալ, մինչև իսկ պանդխտության մեկնողից յոթը տարի որևէ լուր չունենալու դեպքում: Պատճառաբանվում է, որ դա չի համապատասխանում հայաստանյայց եկեղեցու սահմանած կանոններին: Գաղթականությունը և պանդխտությունը մաշում ու ոչնչացնում է հայությանը Պարսկաստանում<sup>69</sup>:

Հոգևոր մշակույթ: Բաֆֆին գրի է առել մի շարք ավանդություններ, որոնք գալով դարերի խորքից մինչև XIX դարի երկրորդ կեսը պահպանվել էին պարսկահայերի մեջ, անդրադարձել է Պարսկաստանում դպրոցական ցանցի անմխիթար վիճակին և մի շարք վանքերի ու եկեղեցիների խաղացած դերին: Համառոտակի կանգ առնենք այս հարցերին առանձին-առանձին:

Խոյից մեկնելիս, ճանապարհին Բաֆֆին հանդիպում է կարմիր քարից կառուցված մի փոքր մատուռի, որը հայտնի է Սուրբ Վարդան անունով: Ուղեկցի խոսքերով՝ Վարդանը պատերազմելով անհավատների դեմ նահատակվել է, որի հիշատակին էլ կառուցել են այդ մատուռը: Երբ հասնում են աղով հարուստ մի քանի բլուրների, ուղեկիցը պատմում է, որ Վարդանը հալածել է անհավատների առաջնորդին մինչև այդ աղահանքերը: Վերջինս թաքնվել է քարաժայռի ետևում, բայց Վարդանն իր նետերով ծակոտել է քարերը և սպանել նրան: Ըստ Բաֆֆու, այդ ավանդությունների շնորհիվ մեր հերոսի սուրբ հիշատակը դեռ

<sup>67</sup> Տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Հոդվածներ, էջ 191:

<sup>68</sup> Բ ա ֆ ֆ ի. Ճանապարհորդություն..., էջ 458-459:

<sup>69</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 459-460:

անմոռաց է մնացել տեղացի հայերի մեջ<sup>70</sup>:

Բաֆֆին ակնատես է լինում քարածայրից քիչ ներքև, աղբյուրի ջրում մահմեդական կանանց լողանալուն: Նրանցից տարեցն ասում է, որ ավագանը նվիրական սրբազան օջախ է, մարդիկ տարբեր հիվանդություններից բուժվելու նպատակով լողանում են այդ աղբյուրի ջրում: Նրանք պատմում են, որ մեծ հսկան՝ Ղազնաֆարը<sup>71</sup> (փահլևան) այստեղ սպանել է իրենց պապերին, այս աղբյուրի ջուրը բխում է նրանց արյան կաթիլներից: Մահմեդականներն այդ ավագանը համարում են սրբատեղի, ամեն ուրբաթ երեկոյան հեռավոր վայրերից այստեղ են գալիս և վառում սրբազան ճրագները:

Սալմաստ գավառից Բաֆֆին անցնում է Տնորիք, որպեսզի հետագոտի տեղի հայերի նահապետական կենցաղը: Նրան ուղեկցող հայը պատմում է, թե հեթանոսների երեցը (մեծ քուրմը) այս ձորի մեջ հալածել է Բարդուղիմեոս առաքյալին, որի անեծքով քուրմը քար է դարձել: Այդ պատճառով էլ ձորը կոչվում է Երեցի ձոր, իսկ սարի գագաթին կանգնեցրած քարե սյունը համարում են երեցի քարացած արձանը<sup>72</sup>:

Երբ երեցը հալածում է առաքյալին, նա փախչում է, մեջքով հենվում քարին՝ պաշտպանվելու նպատակով: Հանկարծ քարը բացվելով՝ առաքյալին ընդունում է իր գիրկը: Քարածայրը սուրբ է համարվում, մարդիկ այնտեղ գալով թիկունքով քավում են քարին, որ իրենց մեջքը պնդանա և հիվանդությունը բուժվի: Այդ քարը ճանապարհորդների անվերջ քավելուց «բոլորովին կոկվել է»,– գրում է Բաֆֆին<sup>73</sup>: Քիչ հետո,– ասում է Բաֆֆու ուղեկիցը,– դուք կտեսնեք Սուրբ Բարդուղիմեոսի մեկ այլ հրաշքը: Այն վիշապի ահագին մարմին է, որին սպանել է Բարդուղիմեոսն իր գավագանով: Վիշապն անքան մեծ է, որ գյուղացիները նրա բերանում տեղավորում են իրենց անասունների ձմեռվա ողջ պաշարը<sup>74</sup>:

Բաֆֆին անդրադարձնում է նաև ժողովրդական հավատալիքներում «խերով» ու «շառով» ոտք ունենալու հավատքին: Ըստ որի, չար ոտքը ինչ գործի վրա էլ հանդիպի, չի հաջողվի, մինչդեռ բարի ոտքն իր հետ բարություն կբերի: Պատահական չէ, որ պարսիկների մեջ ողջունելու ձև է «քայլերդ բարի լինի» խոսքերը:

Ուշագրավ է ջինների բարի հրեշտակների մասին հարեմում փակված հայ կնոջ խնդրանքը Բաֆֆուն. «Կարող եք այնպես անել, որ ինձ ջինները այստեղից վեր առնեն տանեն հեռու, այնտեղ, ուր ես եմ ցանկանում»<sup>75</sup>:

<sup>70</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 367:

<sup>71</sup> Ղազնաֆար նշանակում է հաղթական, գագաններին հարկանող (գագանահար): Ավանդությունը մի ժողովրդից մյուսին անցնելով կերպարանափոխվել է, սակայն բովանդակությունը նույնն է մնացել: Ղազնաֆար անունը հեթանոս պարսիկները շնորհեցին մեր Վարդանին, իսկ այժմ մահմեդական պարսիկները շնորհում են իրենց Ալիին, տե՛ս նույն տեղում, էջ 368:

<sup>72</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 407-408:

<sup>73</sup> Տե՛ս նույն տեղում: Դա հիշեցնում է Սիսիան–Գորիս ճանապարհի վրա գտնվող հանրահայտ պորտաքարը, որի վրա չբեր կանայք քավում էին որովայնով՝ գավակ ունենալու ակնկալիքով:

<sup>74</sup> Ըստ Բաֆֆու՝ դա այր պետք է լիներ քարածայրի մեջ՝ բերանը վիշապի տեսքով (տե՛ս նույն տեղը, էջ 409):

<sup>75</sup> Նույն տեղում, էջ 339: Ջին կամ զին արաբերեն բառ է, որը համապատասխանում է հայերեն քաջքերի իմաստին, իբրև՝ բնության, տեղանքի և մարդկանց մասին հոգացողների, ինչպես քրիստոնեության մեջ՝ հրեշտակները (տե՛ս Թ. Ա. վ. դ. ա. լ. բ. է. կ. յ. ա. ն. Միհրը հայոց մեջ, Վիեննա,



Բաֆֆու վկայությամբ, պարսկահայերի հավատալիքներում կայծակը համարվում է Աստծու հրեղեն սուրբ, որով նա կոտորում է դներին:

Բաֆֆին անդրադարձել է նաև Պարսկաստանի հայաշատ վայրերում սփռված հայկական վանքերի և տաճարների գործունեությանն ու ունեցած դերին: Նկարագրել է վանականների կենցաղը, վանքերի խղճուկ հնարավորությունները տնտեսական ու մշակութային կյանքում: Առավել տարածված են Սուրբ Աստվածամոր անունը կրող շինությունները<sup>76</sup>:

Խոսելով Նոր Ջուղայի երբեմնի բարգավաճ վիճակի մասին՝ Բաֆֆին գրում է, որ քաղաքը ժամանակին ուներ 20 եկեղեցի, որից կանգուն են մնացել միայն 2-ը: XIX դ. 70-ական թվականներին գործում էր երկու վանք. մեկը Սուրբ Կաթողիկեն, որն ուներ 20 միանձնուհի, մյուսը՝ Ամենափրկիչը, որտեղ գտնվում էր տեղական առաջնորդարանը<sup>77</sup>: Վանքերի դռները բաց են աղքատների առջև, ամեն ճանապարհորդ դրանց մեջ կարող է հաց ու հանգիստ գտնել:

Ավելի հանգամանորեն գրում է Տիրամոր վանքի և նրան պատկանող փոքրիկ գյուղի մասին, որը մեծ մասամբ բնակեցված է բորոտներով: Նրանք բոլորն էլ հայեր են և իրենց անվանում են «Տիրամոր խեղճեր», իսկ ախտը կոչվում է «Տիրամոր յարա»: Հաճախ վանականները բորոտներին տանում են մարդկանց մեջ՝ ցույց տալով «Տիրամոր պատիժները»: Սակայն որպես կանոն, բորոտները մեկուսացված են շրջապատից, որպեսզի մյուսներին չվարակեն<sup>78</sup>:

Բաֆֆին չէր կարող չանդրադառնալ կրթության՝ Պարսկաստանում տիրող անմխիթար վիճակին: Հայերի ու եվրոպական միսիոներների դպրոցաշինության փորձերը հանդիպում էր մահմեդական հոգևորականության դիմադրությանը: Երբ Դավրեժ քաղաքում ֆրանսիացի միսիոներները մի քանի տարի առաջ դպրոց են կառուցում, պատերից մեկը քանդվում է, որը ճակատագրական է դառնում դպրոցի համար. դա դիտվում է որպես ոչ ցանկալի նախադեպ, և դպրոցի շինարարությունը դադարեցվում է<sup>79</sup>: 1850 թ. Դավրեժում Սահակ եպիսկոպոս Սաթունյանը ձեռնարկում է մեկ ուրիշ դպրոցի կառուցումը, սակայն կրկին հանդիպում է խիստ դիմադրության: Տարածքի սղության պատճառով, նա որոշում է դպրոցը հիմնել հին գերեզմանատան տարածքում: Տեղի հայերն ընդդիմանում են՝ չցանկանալով իրենց պապերի գերեզմանների վրա տեսնել նորակառույց շինությունը: Հաղթահարելով որոշ արգելքներ՝ Սաթունյանին հաջողվում է մեկ տարվա ընթացքում կառուցել դպրոցն ու առաջնորդարանը: Սահից առաջ նա թողել էր որոշ գումար, որը դարձել է դպրոցի հետագա գործունեության համար հիմնադրամ: Նրա հաջորդների օրոք ևս դպրոցի վիճակը չփոխվեց: Էջմիածնի միարանությունը դպրոցի ղեկավար է նշանակում Անդրիաս եպիսկոպոսին, որի ջանքերի շնորհիվ ամեն տարի պետական միջոցներից որոշ գումար էր հատկացվում դպրոցին: Ստեղծվեց դպրոցի հոգաբարձուների խորհուրդ,

1929, էջ 97):

<sup>76</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 335-336:

<sup>77</sup> Տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Հոդվածներ, էջ 127:

<sup>78</sup> Տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Ճանապարհորդություն... էջ 475-476:

<sup>79</sup> Տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Հոդվածներ, էջ 121:

կարճ ժամանակում հավաքվեց որոշ գումար, որը ծառայեցվեց դպրոցի բարեկարգմանը: Շուտով դպրոցը ճանաչում գտավ նաև եվրոպացի հյուպատոսների շրջանում: Մինչև իսկ պարսից վերնախավին պատկանող որոշ մարդիկ իրենց երեխաներին ուղարկում էին այդ դպրոցը, կատարում նվիրատվություններ. ստեղծվում է գրադարան: Բաֆֆին մանրամասը նկարագրում է դպրոցի նիստուկացր, ուսման մեթոդները<sup>80</sup>: Նա անդրադառնում է նաև Նոր Ջուղայի երեք դպրոցներին: 1843 թ. հիմնվում է Հայկյան-Հայրենասիրական դպրոցը, որտեղ սովորում էր 70 աշակերտ, երկրորդը Սուրբ Մինասա դպրոցն էր՝ 80 աշակերտով, իսկ 1852 թ. հիմնվում է Ամենափրկիչյան դպրոցը՝ 40 աշակերտով: Այս դպրոցները հովանավորում էին հնդկահայ մի խումբ մեծահարուստներ: Վիճակավոր առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսն այս դպրոցները հանձնում է անգլիացի միսիոներների հովանավորությանը, որպեսզի դրանցում արմատավորեին եվրոպական մանկավարժության սկզբունքները: Մակայն դա չէր կարող նպաստավոր լինել դպրոցի համար. եպիսկոպոսը զգում է իր սխալը և միայն դատարանի վճռով է կարողանում դպրոցի հովանավորությունը ետ վերցնել միսիոներներից<sup>81</sup>:

Մի խումբ հայերի ջանքերով Թեհրանում ևս հիմնվում է Հայկազնյան դպրոց, որն ուներ 40 աշակերտ և պետության կողմից տարեկան 200 թուման նպաստ էր ստանում: Այն մինչև իսկ մրցում էր կաթոլիկ ու բողոքական միսիոներների հիմնած դպրոցների հետ: Միսիոներները Պարսկաստան էին գալիս մեծ գումարներով, օգտվելով ժողովրդի տնտեսական ծանր վիճակից, «օգնում» էին հայերին ու ասորիներին, բացում դպրոցներ, վճարում նրանց հարկերն ու տուրքերը, ամբողջ գյուղեր զցում իրենցից կախման մեջ՝ տարածելով կաթոլիկությունը<sup>82</sup>:

Վերոհիշյալ դպրոցները թեև չէին կարող ժողովրդին լիովին դուրս բերել խավարից, սակայն ինչ-որ դրական քայլեր անում էին: Խոյի հայերի վկայությամբ՝ նախկինում, երբ նամակներ էին ստանում պանդխտության մեկնած իրենց հարազատներից, դրանք ամիսներով մնում էին չկարդացված. գյուղից գյուղ էին տանում, նույնիսկ հոգևորականները չէին կարողանում կարդալ այդ նամակները. «Այժմ, փառք Աստծո, մեր որդիքն կարդալ-գրել իմանում են»<sup>83</sup>:

Եվրոպացի քարոզիչների վկայությամբ XIX դ. 30-ական թվականներին Ուրմիա քաղաքի հայերի նախկին ձեռագրերից մնացել են բեկորներ, որոնք ոչ թե կարդում էին, այլ փաթաթում թաշկինակի մեջ, պահում տան մի անկյունում՝ որպես սրբություն: Այդ մասունքների առջև ճրագ են վառում, երդում տալիս կամ դնելով հիվանդի գլխին, ցանկանում են բուժել նրան<sup>84</sup>:

Չնայած համառոտ, սակայն Բաֆֆին ուշագրավ վկայություններ ունի նաև Պարսկաստանում ապրող մի շարք ժողովուրդների ու էթնիկական խմբերի վերաբերյալ: Անդրադառնալով քրդերին, նա գրում է. քրդերը մշտական բնակույթ-

<sup>80</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 124:

<sup>81</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 128:

<sup>82</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 130:

<sup>83</sup> Բ ա ֆ Ֆ ի. Ճանապարհորդություն..., էջ 353:

<sup>84</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 438:

յան վայր և անշարժ կալվածքներ չունեն, տարվա երեք եղանակներին իրենց անասունների հոտերի հետ տեղափոխվում են բարձրադիր լեռնային գոտիները, իսկ ձմռանը տեղավորվում հայկական գյուղերում, ինչը կատարյալ չարիք է հայ գյուղացու համար, նրանցից խլում են վերջին ունեցվածքը<sup>85</sup>: Գյուղացին պարտավոր է կերակրել ոչ միայն մարդկանց, այլև՝ անասուններին:

Հայտնի է, որ քրդերը գիր ու գրականություն չունեն, ապրում են ազգային ավանդույթներով, որոնք բանավոր փոխանցվում են սերնդից սերունդ: Ավագակությունը նրանց մոտ չի դատապարտվում, կողոպուտի համար անընդունակ անձը համարվում է ծուլ ու երկչոտ: Ըստ Բաֆֆու, քուրդն իր վրանում հյուրասեր է, հյուրի հետ կիսում է իր աղն ու հացը, իսկ եթե նրան հանդիպի վրանից դուրս, պատրաստ է թալանել ու սպանել: Քրդական ամեն մի ցեղ ունի իր նահապետը, որը մեծ հեղինակություն է վայելում, վիճելի հարցերը լուծվում են նրա կողմից: Քրդական յուրաքանչյուր քոչվոր ընտանիք նրան բաժին է հանում որոշ քանակությամբ մթերքներ ու անասուն: Ապրելով Պարսկաստանի ու Թուրքիայի սահմանային գոտիներում՝ քրդերը թալանում են երկու երկրների վաճառականներին, խլում անասունների հոտերը<sup>86</sup>:

Իր գրառումներում Բաֆֆին խոսում է ասորիների զբաղմունքների, հավատալիքների, հայերի հետ ունեցած բարեկամական կապերի մասին: Նրանց հիմնական զբաղմունքն անասնապահությունն է, ստացված մազն ու բուրդը կազմում է ավանդական տարազի հիմքը, իսկ ուտեստի մեջ գերակշռում են միսն ու կաթնամթերքը: Չնայած ասորիների տարազը կոպիտ է, սակայն դիմացկուն է և լավ հարմարեցված իրենց կենցաղին: Առանձնապես ջերմորեն է խոսել ջուլիո ցեղի մասին, որոնք զենքը ձեռքներին ընդդիմանում են թշնամիներին: Այդ ցեղի մարդիկ նեստորական են, որոնց եկեղեցական ծիսակատարությունը շատ պարզ է, ժամասացությունը կատարվում է հին ասորերեն լեզվով, որն անհասկանալի է ժողովրդի համար: Նրանց տաճարները մեր հին վանքերի շինվածքի ձևն ունեն, երաժշտական մեղեդիները նման են հայկականին: Ժամատան տաճարը գուրկ է պատկերներից և իր արտաքին տեսքով շատ նման է բողոքական եկեղեցական տաճարներին: Ասորիները քրդերի հետ ունեն որոշ կենցաղային նմանություններ, սակայն ազնիվ են ու պարզամիտ<sup>87</sup>:

Չնայած զանազան հալածանքներին, հրեաները կարողացել են պահպանել իրենց ազգային առանձնահատկությունները, մայրենի լեզուն, կրոնը, ժողովրդական ծեսերն ու սովորույթները: Հրեաները մեծ մասամբ բնակվում են քաղաքներում, զբաղվում ոսկերչությամբ ու մանր առևտրով: Սալմաստի գլխավոր շուկաներում հրեաներն առանձին տուրք են վճարում մահմեդականներին, որպեսզի վերջիններս պաշտպանեն նրանց անձն ու գույքը: Սակայն հրեաներին պաշտպանելու փոխարեն, այդ պաշտոնյաները ևս դառնում են նրանց կեղեքողն ու թալանողը<sup>88</sup>: Մինչև իսկ մորուք պահելու համար հրեաները պարտավոր են

<sup>85</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 417:

<sup>86</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 417-418:

<sup>87</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 428-430:

<sup>88</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 457:

հարկ վճարել:

Բաֆֆին հյուրընկալվելով գնչուների դարաչիներ կոչվող ցեղի գերդաստաններից մեկում, նկարագրել է նրանց զբաղմունքները և տան ներսույթը: Թոնրի շուրջ նստած տղամարդիկ ձիու պոչի մազից մաղ են գործում, կանայք սև սաթից ուլունքներ և այլ զարդեր պատրաստում, ոմանք ջութակ են նվագում և դաֆի վրա գուշակություններ անում: Փոքր երեխաներին մանկուց սովորեցնում են երգել ու պարել, շրջում են վայրից վայր և տարբեր հնարքներով գումար վաստակում, որպես գրաստ օգտագործում ավանակներին: Երբեմն գնչուհին ծննդաբերում է ճանապարհին: Նա առանձնանում է որևէ ժայռի տակ և մի քանի թույլ անց, մանկանը կրծքին սեղմած, վազում միանալու խմբին<sup>89</sup>: Բաֆֆին որոշ վկայություններ ունի նաև հայ բոշաների (գնչուներ) մասին: Նրանք իրենց կենցաղով ու տեղափոխումներով նման են գնչուներին, սակայն խոսում են հայերեն և իրենց անվանում լուսավորչական քրիստոնյաներ<sup>90</sup>:

Պարսկաստանում մահմեդականության հաստատումից հետո՝ երկար, ժամանակ պահպանվել էին արևապաշտության հետնորդները, որոնց թվին Բաֆֆին դասում է գաբրիներին, որոնք չընդունեցին մահմեդականություն: Նրա կարծիքով, մեր հեթանոսական կրոնի հետքերը կարելի է գտնել գաբրիների մեջ<sup>91</sup>:

Այսպիսով, Բաֆֆու թողած ազգագրական հարուստ ժառանգության սուսկ մի փոքր հատվածի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ոչ միայն վեր հանել պարսկահայերի XIX դ. երկրորդ կեսի տնտեսական, հասարակական, ընտանեկան կենցաղի, նյութական և հոգևոր մշակույթի հիմնական գծերը, այլև որոշ պատկերացում կազմել Պարսկաստանում ապրող մի շարք էթնիկական խմբերի մասին:

ПЕРСИДСКИЕ ПУТЕШЕСТВИЯ РАФФИ КАК ИСТОЧНИК ЭТНОГРАФИЧЕСКОГО ИЗУЧЕНИЯ ПЕРСИДСКИХ АРМЯН

АНУШАВАН ПЕТРОСЯН

Р е з ю м е

Литературное наследие Раффи очень богато этнографическими свидетельствами, которые до сих пор не привлекали внимания этнографов. В 1913 г. в сборнике “Персидские картины” Анна Раффи опубликовала “Путешествие в Персию”, в котором отразились впечатления Раффи во время

<sup>89</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 462-464:

<sup>90</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 465:

<sup>91</sup> Տե՛ս Բ ա ֆ ֆ ի. Հոդվածներ, էջ 187:

его путешествия в Персию в 1857–58 гг. Завершил цикл персидских впечатлений ряд статей Раффи "Письмо из Даврежа", написанных им во время жизни в Тавризе. Они относятся не только к персидским армянам, но и к ряду живущих в Персии народов и этническим группам. Эти материалы отражают экономический, общественный и семейный быт персидских армян, а также материальные и духовные области культуры. Благодаря записям Раффи возможно составить четкое представление об общем этническом облике персидских армян. Раффи был прекрасно знаком с Персией, и потому этнографические материалы Раффи достоверны, как итог его личных наблюдений.

## RAFFI'S PERSIAN TRIPS AS A SOURCE OF ETHNOGRAPHICAL STUDIES OF THE ARMENIANS OF PERSIA

*ANUSHAVAN PETROSYAN*

### S u m m a r y

Raffi's literary heritage is considerably rich in ethnographical facts, which haven't been taken into notice by the ethnographers up to now. In 1913 in the collection "Persian Scenes" Ann Raffi published "A Trip to Persia", where Raffi's impressions connected with his trip to Persia in 1857–58 were reflected. The series of Persian impressions ended in a number of Raffi's articles "A Letter from Davrezh", written by him while living in Tabriz. They concern not only the Armenians of Persia, but also some nations and ethnic groups living in Persia. These facts include economical, social and the family modes of life of the Armenians of Persia, and also the spheres of material and spiritual culture. Due to Raffi's notes it is possible to have the general idea of ethnographical description of the Armenians of Persia. Raffi knew Persia very well, that is why Raffi's ethnographical notes are of true value, being the result of his personal studies.